

7915  
new

7915  
hug.

9694

Ա. Էջմիածնի Հրատարակութիւն

Ա. ՅՈՒՓՈՒՄԵԻ ՎԱՆՔԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՀԱՅԱԽՈՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Այցելուների համար



Կազմեց

Միաբան Ա. Էջմիածնի  
Երեսիս Գ. ՍՏԵՓԱՆԵՍԻՆ



ՎԱԴԱՐՃԱՊԱՏ

Տառած Տպարան Ա. Էջմիածնի


1912

Հրամանու

Տ. Տ. Գ է Ո Ր Գ Ե.


ԱՐԲԱՆԱԴՐՅԱՆ ԿԱԹՈՒԶԻԿՈՍԻ

ամեայն Հայոց



Ա. ՀՕՒՓՄ/ՄԵՒ ՎԱՆՔ.

ԲՆԹԵՐՑԱՌԱՆԵՐԻՆ



Եյտ և նման պրքոյլիներ գրադաւառ  
բակելով մեր նպատակն է օտար և  
մեր ազգի այցելուներին և մահաւանդ  
դպրոցական աշակերտներին ճիշտ ու  
համառօտ տեղեկութիւններ տալ որ-  
պես ուղղեցոյց :

Ա. Գայտանէի վանքի վանահայր  
Երեմիա վ. Ստեփանեան

>○<

Ա. ՀՐԻՓՈՒՄՔԻ ՎԱՆՔ

Հոռվմայեցւոց կայսր Դիոկղիտիանոսի հալածանքից 287 փրկչական թւին Հայաստան վոխչող կոյսերի մէջ էր նսե ո. Հոիփումէ կոյսը, որ նշանաւոր էր իւր առնմական ազնուականութիւնով, աննման գեղեցկութիւնով, հանձարով և քրիստոնէական անձնադրութիւնով:

Հայաստանում էլ կոյսերը խիստ հալածանքներ կրեցին Տրդատի կողմից, որ Դիօկղիտիանոսի ոլէս քրիստոնէութեան դէմ հալածանքներ էր վարում:

Վաղարշապատի մայրաքաղաքի այգիների հնձաններից մէկում զտանք քրիստոնէայ կոյսերին:

Տրդատ թագաւորը հաւանելով ո.

Հոխիսկմէին կամեցաւ նրա հետ ա-  
մուսնանալ, բայց ոուրբ կոյսը հաւա-  
տարիմ մնալով իւր քրիստոնէական հա-  
ւատին, արհամարեց թագուհու ունե-  
ցած պատիւնները ու պալատական ճո-  
խութիւնները և իւր 32 ընկերութիւնների  
հետ ընդունեց նահատակութեան պատ-  
կը:

Երկար ժամանակ չանցած հեթանոս,  
քրիստոնէութիւնը հալածող Տրդաս  
թագաւորը ո. Գրիգոր Լուսաւորչի յոր-  
դորների ու քարոզների շնորհիւ ամբողջ  
թագաւորական տնով ու պալատական-  
ներով ընդունեց Քրիստոսի ո. Աւե-  
տարանը, որից յետոյ ո. Հոխիսկմէի  
ու նրա հետ նահատակութած կոյսերին  
թագեց նրանց նահատակութեան տե-  
զում և գերեզմանի վերայ վկայարան  
կանգնեցրեց:

Ո. Հոխիսկմէի վկայարանը կամ  
այժմեան վանքը գտնուում է Երևանի

Ճանապարհի վերայ և ո. Էջմիածնից  
դէպ հիւսիս արևելք՝ մի վերաս հեռու:  
Վկայարանը շինած է ո. Գրիգոր  
Լուսաւորչի օրով և շինութեան գործին  
ուղղակի մասնակից են եղել Աբգար  
թագաւորը, Աշխեն թագուհին և Տրդա-  
տի քոյր՝ Խոսրովիդուխատը: Ինչպէս  
Ապաթանգեղոսը յիշում է, նոյնիսկ ո.  
Հոխիսիմէի նշանակերի համար տեղ  
փորողը ո. Լուսաւորչի ցուցումներով  
եղել են արքայական տան անդամները:

Կոյսերի շիրիմը գտնուում է տա-  
ճարի ուղիղ բեմի տակ՝ մի կամարա-  
կապ զամբարանի մէջ, որը մօտ մի  
սաժէն բարձրութիւն՝ նոյն չափ էլ  
լայնութիւն ունի, իոկ վկայարանի  
մուտքը հիւսիսային աւանդապանից է:

Այժմ ո. կոյսի շիրիմի վերայ  
դրութած է մարմարեայ տաղանաքար  
կոյսի պատկերով և շատերը թիւր ու  
սխալ հասկացողութիւնով կարծում են,

թէ նվազաքները այդ նորուձև գաղաղի  
մէջ են:

Ս. Էռւսաւորիչ և Տրդատ թագաւորը առաջին մատուռը կամ վկայարանը շինեցին Փրկչական 301 թւին. թէ ի՞նչ ձեւ ունելու այն, ոչ մի պատմագիր չի յիշում. միայն յիշատակում են, թէ մւայտրահնը շատ մութ և նեղ էր:

Պարսից Շապուհ թագաւորի զօրքը 380 թւին այդ սըբատաշ կոփածոյ քարերից շինած մատուռը քանդում է: 395 թւականին Մեծն Ներսէսի որդի ո. Խոսհակ հայրապետը, ինչպէս յիշում է Ստեփաննոս Ասողիկը, վերանորոգում է\*:

Կոմիտաս կաթուղիկոսը դեռ հայրապետական դահը չըբազմած, երբ գեռ ո. Հովհաննէի վկայարանի Փակակալ էր, մեծ փափագ ունելու նորոգելու այն, որովհետեւ 395 թւից մօտ 224 տարի

էր անցել և նորից կարօտ էր վերանորոգութեան: Այդ ցանկութիւնը նա կատարեց կաթուղիկոսութեան հէնց առաջին տարուց. այնէ 618 թւից սկսելով վերաշինութեան դորձը:

Ամենից առաջ քանդում է հին մութ մատուռը հիմնովին, և գանելով նահատակ կորսի նշխարների արկղը, Լուսաւորչի և ո. Խոսհակի կնիքներով կնիքած՝ չի համարձակւում բաց անել. այլ ինքն էլ իր հայրապետական կնիքով կնիքում ու զնում է բացօպեայ տեղում, որ նախ եկեղեցին շինուի ու չորանայ և երկրորդ հաւատացեալ ժողովրդին հնարաւորութիւն տայ դաշերկապութիւն տալու:

Այսուհետեւ հին նեղիկի վկայարանի տեղը կասուցանում է կոփածոյ քարերով ու լայնանիստ զմբէթով առանց սիւների այժմեան հոյակապ տաճարը և այս ամենից յետոյ ո. կոյսերի նըշ-

\* ) Shu. Ասողիկի երես 478,

խարները ամէկափում է իր նոտիկին  
տեղբայցք մնան տաճարի քեմի տակ:

Ա. Հսկիսիմէլի վանքի վերաշի-  
նութեան պատմութիւնը աւանդում է  
Սեբէոս եպիսկոպոսը, որ ժամանակա-  
կից էր Կոսիասա հաթուղիլոսին: Վեր-  
ջապէս այսօր իսկ արհմտեան կամարի  
տակ լուսամուտի վերեր զրսի կողմէց  
զանգագատան մօտ կայ հետեւել արձաւ  
նազրութիւնը<sup>\*)</sup> Զանգակատունը, որ  
կանգնած է չորս քարեայ սիւների  
վերայ, որոնցից երկուսը տաճարի  
դռան պատի ճետ հն միացած:

Եղիազար կաթուղիկոսը, որ շատ  
եկեղեցիներ շինեց, ինչպէս յիշում է  
Սիմէօն կաթուղիկոսը, և. Հսկիսիմէլի  
վանքի մէջ էլքարեկարգութիւն արեց:

1776 թւին մեհաստանի քառա-  
կոսի պարիսպը ըրդերով ու քարաշէն

սրբատաշ կամարաձե մեծ գուտը շի-  
նեց ո. Էջմիածնի միաբան Մկրտիչ  
եպիսկոպոսն իր սեպհական միջոցներով  
և ունի արձանագրութիւն:

1790 թւականին Կարնեցի Ղուկաս  
կաթուղիկոսը շինել է տաղիս տեղի  
հոյակառ և փառաւորագոյն զանգա-  
գատուն արժանայիշատակ Կալկաթացի  
Խաչատուր աղա Զնթլոււմեանի միջոց-  
ներով:

Ա. Կոյսերի յիշատակը յարգի է  
ոչ միայն հայ քրիստոնիայ ժաղովրդի,  
այլ և օտար քրիստոնեայ հաւատացող-  
ների առաջ ես: Եւ կաթոլիկ հոգեո-  
րականները՝ որպէս պատմում է Առա-  
քել պատմագիրը, փորձ են անում  
դադուռկ վեր տանել ու տանել ո. Կոյ-  
սերի նշխարների մի մասը, որից առա-  
ջանում են նոյն նոյն իսկ կոիւներ:

Ա. Հսկիսիմէլի վանքը գեռ Փիլիպ-  
պոս կաթուղիկոսի ժամանակից սկսած

<sup>\*)</sup> Տեսնել պրոյկի վերջում.

ունեցել է և այսօր էլ ունի իր վաճառ-  
հայրը և ինչպէս յիշում է հանգուցեալ  
Սբէլ եպիսկոպոսը,\* ) Միմէօն կաթու-  
ղիկոսի օրով ունէր մօտ 60 որբ, ան-  
տէր մանուկների համար ապաստարան,  
կրթարան, որոնք և վանքի հովանա-  
ւորութեան տակ մեծացել, անուել  
և զառել են եկեղեցու կատարեալ անձ-  
նադոս պաշապաններ, ինչպէս մենք  
այդ կանոններ, երբ կիսուենք ո. էջ-  
միածնի շինութեան և ժառանդաւորաց  
դպրոցի մասին, որը մինչև Դէոդեան  
Ճեմարանի բացւիլը գոյութիւն ունէր:  
Ա. Հոփիսիմէի հին խցերը գանուում  
էին տաճարի արևմտեան հիւսիսային\*\* )

\* ) Տես «Թրարատ» 1873

\*\*) 1883 Թւականին ես իմ երկու լնգեր-  
ներով-այժմ Թեմական տեսուչ 8. Թաշիմանեանի  
եւ Թեմակ. դպրանցի տեսուչ Ա. Զիլինկարեանի  
հետ մօտ 3 ամիս այդ ին խցերի մէջ ենք ապ-  
րել եւ Ճեմարան յանախել:

և հնագոյնները՝ արևմտ. հարաւային  
կողմում:

Ա. Էջմիածնի միաբան Վաղարշա-  
պատցի երջանկայիշատակ Երեմիա  
արքեպիսկոպոս Գալստեանը այդ հնա-  
ցած և խարխուլ սենեակները քանդեց.  
վանքի բազը ընդարձակեց արևել-  
եան և հարաւային կողմից, հին հողե-  
ղէն պարիսպը վերցնելով, սրբատաշ  
քարերով նոր պարիսպ կանգնեցրեց:  
Շինեց և որբատաշ քարերով երևար-  
կանի բնակարարան:

Վաղաժամ մահը արգելք եղաւ  
Երեմիա արքեպիսկոպոսի շինարար  
գործունէութեան. նրա թողած դումա-  
րով ի Տէլ հանգուցեալ Մկրտիչ կա-  
թուղիկոսը վայելուչ կերպով վերանո-  
րոգեց տաճարը ներսից և զրսից այն-  
պէս, ինչպէս այժմու կայ:

Երեմիա եպիսկոպոսը վախճանուել  
և թաղուել է ո. Հոփիսիմէի մենատա-

նի արևելեան կողմը 1897 թւին: Շինարար Երեմիա արքեպիսկոպոսի գերեզմանը գեռ տապանաքար չունի:

Վեհափառ հայրապետի բարեհաճութիւնով պէտք է դրուի մարմարեայ տապանաքար, որ ուշանում է վարպետ ՀՊԻնելու պատճառով:

Կան թէ դրում և թէ տաճարի մէջ ամփոփուած հայրապետական շիրիմներ, որոնցից մի քանիսը աւելորդ չենք գտնում արձանագրել:

Տաճարի մէջ տեղը բնմի հոնդէպ աւանդութեան համաձայն, թաղուած է եկեղեցին կառուցանող Կոմիտաս կաթողիկոսը:

## ՅԱԽԵԼՈՒԱԾ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

ա\*)

«Ես Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հոփիսիմէի, կարգեցայ յաթոռ սրբոյն Դրիգորի և Զինեցի զտաճար սրբաց վկայիցս Քրիստոսի»: \*\*)

Բ)

«Ի թուիս ոճ՝ (յամի 1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն Հայոց վերսարին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսանացն Հոփիսիմէայ և Գայիանեայ»:

Գ)

«Զանգակտունո այս յիշատակ իւր կանգնեալ աղայ Խաչիկ իշխանն պերձացեալ. որ էր տօնմիւ քաջ Զնթլումեան գովեցեալ.

\*) Համեմատել զ-ի հետ.

\*\*) Թւական ցունի

որդի պարոն Առաքելի յատկացեալ.  
նոր Զուղացու ի Հնդիկս գնացեալ,  
ի Կալկաթա մեծ քաղաքի բնակեալ.  
ուր և զործով պարծանք ազգի երևեալ,  
ի բազումազգս բարի անուամը հռչակեալ.  
յԱնգլիացոց թագաւորէն օժտեցեալ  
սակայ մանեակ և պատկերաւ պսակեալ,  
խոկ զինի վախճան բարի ընկալեալ,  
Ռայ ընդ Զայի, Ղատն ի վերայ յաւելեալ.  
Ս.մինքն է թիւ Փրկչին ռչդ.» (1790):

---

¶).

«Շնորհիւ տուն Աստուծոյ արտա-  
քին պարիսպ սրբոյ վանիցս հանդերձ  
բրդովքս և կամարակապ դրամբս՝ ար-  
դեամը տուն Սիմէօնի սրբազնն կա-  
թուղիկոսի սպասաւոր Մկրտիչ եպիս-  
կոպոսին ՚ի յիշատակ իւր և կրկնակի  
ծնողաց իւրոց հոգեորաց և մարմա-  
ւորաց. ի ոմիե, ի յունիսի ե. լն»:

---

Ե)

Ներսի կօղմից արեւելեան պատի մեջ.  
Քո ոծ յիշեա զկոմիտոս  
Հայոց կաթողիկոս շին  
ուղ սրբոյ Հոփիսիմէկ»)

---

զ)

Ես կոմիտաս եկեղեցապան սր  
բոյ Հոփիսիմէկ կոչեցայ յա  
թոս սրբոյն Գրիգորի շինեցի  
զատաճար սրբոց վկայիցս քի.»)

---

Է)

Աւագ խորանի ձախակողմեան որմի վրայ  
աստիճաններից բարձր.

Ի թիւ ԶիԵ.

Ի պատրոնութեան իշխանաց իշխա-  
նին մեծին շահնշահի և աբուղին ես շի-  
րին խաթունս ու պայտաւն խաթունս ու  
թաւղթէս ութալէս ու խոճէս ու զա-  
յիրս թողաք զնոփիսիմուցս զբարակին

շարիատն և զշահնակն բարեկի հակն  
արդ ի մերոյ կամ յաւարաց իմե-  
ծաց կամ ի փոքրուց խափանել ջանս  
ՅԺԸ հայրապետացն նղոված է կայենի  
և յուդայի մասնակից է և յիր հաւա-  
տէն ապիզար է յամէն յազգէ նալաթ  
է աւրհնել հող զնայ մի ծածկեսցէ  
կատարիչքն աւրհնեն յոց վարամ դրիչ.  
(«Վար» և համ») բաժանուած հն.)\*)

ը)

Փիլիպոս կաթոլիկոսի տապանագիրը

«Հազար հարիւր չորս թուին,  
մարտի քսան և հնդին վախճանեցաւ  
Հաղբակեցի Փիլիպոս սքանչելագործ  
կաթողիկոս ամենայն Հայոց, և եղաւ  
սուրբ նշանաբք նորա յայսմ շիրմի,  
որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»:

\*) Այս արձանադրութիւնները տես Սրարատ.  
1808 երես. 441—42. 2. Գ. վ. Յովսէփեան.

Երկու կաթողիկոսների շիրիմներ  
կարտպետ Աւկնեցու և Աստուածատուր  
Համագանցի գտնւում են զանգակա-  
տան դրան մօտ:

թ)


Նոր սինուրեան հարաւային մուտքի դրան  
նակատի արձանագրութիւնը

«Կառուցան բնակարանիք և պարիսպ  
վանուցս ի ձեռն վանահօր տ. Երեմիա  
ապսի Վաղարշապատեցւոյ արդեամբ  
բարեպաշտ ժողովրդեան Ն. Նախիջե-  
ւանայ և այլ տեղեաց յամի տնն 1894»:

ժ)

Երկարկանի սինուրեան հարաւային  
նակատին

«Եինեցաւ կրկնայարկ բնակարանս  
վանիցս վանահօր ծախիւք և աշխա-  
տութեամբ Երեմիա արքեպիսկոպոսի  
Վաղարշապատեցւոյ յամի 1894».



Բանասէրներին աղբիւրներ \*

- ա) Առաքել Պատմագիր
  - բ) Ադաթանգեղոս
  - շ) Արէլ արքեպիսկոպոս
  - դ) Ստորագրութիւն Կաթ. Էջմ. և գաւ. նոցին  
Յովհ. եպ. Շահփաթունեան
  - ե) Զամբռա
  - զ) Այլարատ Ալիշանի
  - է) Շիրակ Ալիշանի
- 

Արխալի. 9-րդ երես. 5-րդ տողում Աքզարի  
փնխանակ պիտի լինի Տրդատ.

\* Այս պրայիները կազմելիս մենք օգտական  
ցանք վերեւում յիշած զրբերից եւ գեր. Յուսիկ  
արքեպիսկոպոսի դիտուր Թիւներից, որի ժամանք  
չնորդակալու Թիւն:

Մեր Աճխատութիւնները

- |     |                                   |
|-----|-----------------------------------|
| 1). | Աւղղեցոյց օտար լեզուի աւան-       |
|     | դումը բնական ձևով. փորձ. դա-      |
|     | սկրով. չերքեղախօս, վրախօս և       |
|     | տաճկախօս դպրոցներում . . . 30 կ.  |
| 2). | Դէպի Սիրիբիսա, Ցարեցինից          |
|     | մինչև իրկուտսկ . . . . 10 կ.      |
| 3). | Ինչպէս են կազմում գրքերը.         |
|     | կազմարարութեան արհեստ . . . 25 կ. |
| 4). | «Երկու եղլայլ» դպրոցկան           |
|     | կեանքից . . . . . 15 կ.           |

Ս. Էջմիածնի հրատարակութիւնները

- № 1. ս. Հոփիսիմէ.
- № 2. ս. Գայանէ.
- № 3. ս. Շողակաթ.
- № 4. ս. Էջմիածն.
- № 5. ս. Էջմիածնի հասմատաւութեանը, նոր  
վեհարան, Ախնօդ, Արդիւնական, Ճե-  
մարան, միաբանական բնակարաններ  
և այլն:



ԵՐԱԾՈՒՅԹ ՄԱԿԱՐԱՎՈՐԻ

- անուն համբաւ պարունակած  
ուր եղան իսկ մայութ պատ  
և ուստի բարձրացած առաջ  
63 . . . Խոզմելքոր սարսահամ  
ամառային անցգեցին պատ  
64 . . . Հայութի մշտի  
ուղարք առներած ու սիրուն . . .  
65 . . . ուստի մամերայութեան  
մայստրոր ուղարք անցնե  
66 . . . Արքան

ԵՐԱԾՈՒՅԹ ՄԱԿԱՐԱՎՈՐԻ

Տախարան առ 3 11

Անուն առ 3 12

Անունը առ 3 13

Անունը առ 3 14

Անունը առ 3 15

Անունը առ 3 16

Անունը առ 3 17

Անունը առ 3 18

Անունը առ 3 19

Անունը առ 3 20

Անունը առ 3 21

Անունը առ 3 22

Անունը առ 3 23

Անունը առ 3 24

7915

ԱՄ Հայագիտական գրադարան



MAL008180

